*Գ.ՆԺԴԵՀ*

# «...Լինել փղամարդ և քանիցս փղամարդ»

Խաչատրյան Գագիկ Պապիկի. – Ծնվել է 1966 թվականին Սևան քաղաքում: Հայրը վարորդ է, մայրը՝ փոստային փոստուհի:

7-րդ դասարանից սովորել է Երևանի մաթեմատիկական թեքումով դպրոցում, ավարտելուց հետո պատվական դիպլոմով հայտնվել Կիևի օդային ուժերի զինվորական ուսումնարանում:

Հատուկ ընդունակությունների շնորհիվ տիրապետում է օդաչուի, բորտ-ինժեների, բորտ-մեխանիկի, շտուրմանի և այլ մասնագիտությունների: Զինվորական դաստիարակության համար իրեն պարտական է համարում և երախտապարտ է վաշտի հրամանատար, մայոր Ս. Իվանովին, որն, ըստ նրա, ոչ միայն զինվորական գործի բարձրակարգ մասնագետ է, այլև մեծ մանկավարժ-հոգեբան:

Ուսումնարանն ավարտելուց հետո ծառայությունը շարունակել է Անդրբայկալյան զինվորական օկրուգում, այնուհետև Մոնղոլիայի սահմանակից Չիտայի օդային զինուժերի զորամասում:

1990-ի գարնանը տեղափոխվել է Հայաստան, ընդգրկվել Սևանի երկրապահի ջոկատում, երբ տարի շարունակ մարտնչում է հայրենիքի սահմանների անառիկության, Ղարաբաղի ազատագրման համար: Մի քանի անգամ վիրավորվել է: Ներկայումս ՀՀ պաշտպանության նախարարության 83-րդ մոտո-հրաձգային առանձին բրիգադի շտաբի պետի պաշտոնակատարն է:

...Երկրորդ օրն էր, ինչ Շուշին մնում էր խուճապահար փախչող թշնամու արկերի հասցրած վերքերից: Մարտանցքերին նստած ձյունը տեղ-տեղ լճակների էր վերածվել ու այնքան ոչ ուշացած գարնան արևի շողերից, որքան պայթած արկերի բոցակիզից:

Ինչ զենք ուզում է լինի, անհրաժեշտ էր լռեցնել վերջին կրակակետը: Եվ տղաները, որ երկու և կես օր աչք չէին կպցրել, դեպի բարձունքն էին տանում սանրիչները ու սանդիմները: Վճռական այս պահին ամենակարևորը զոհ չտալն էր, առանց այն էլ վիրավորները շատ էին:

Աջ ձեռքն անսովոր ծանր էր և Գագիկին թվաց, թե դա ավելորդ հոգնածությունից է: Սակայն շատ չանցած նրա աչքերի առաջ մթնեց, գլուխն անսովոր պտտվեց և աչքերն սկսեցին մշուշվել, սևանալ: Ավտոմատի բռնակն ամբողջությամբ թաթախվել էր արյան մեջ: Գիտակցությունը դեռևս տեղն էր, և նա վերջին ճիգով փորձեց գլորվել ցած, ուր վիրավորներին վտանգավոր գոտուց դուրս էին բերում բուժակ-քույրերը:

Վերքը կապվեց, հիմա արդեն արյունաքամվելու վտանգ չկար, սակայն նա այլևս չէր կարող կրակել: Մարտի դաշտում միշտ էլ գործ կգտնվի, և Գագիկն սկսեց վիրավորներին քաշել ներքև՝ ամբողջ հույսն ապավինելով ձախ ձեռքին:

...Հինավուրց Արցախի մայրաքաղաք Շուշին ցնծության մեջ էր, նրա ազատագրումը լոկ հաղթանակ չէր, այլ հետագա կռվելիք հաղթանակների նախաակիզբը:

Իսկ կռիվը մերն էր, մենք՝ կռվինը: Եվ հետագա կռիվները ոչ պակաս կարևոր, ոչ պակաս մահաբեր ու պատասխանատու էին, առավել ևս, երբ թշնամին ռմբակոծում է Նոյեմբերյանի, Իջևանի, Կրասնոսելսկի, Ղափանի, Տավուշի սահմանամերձ գյուղերը:

Երկրորդ անգամ վիրավորվեց Տավուշում, Այգեպարի պաշտպանության ժամանակ: Սակայն, ապաքինումը կրճատելով, նա հիվանդանոցից դուրս գալու օրերն էր հաշվում, որպեսզի իր զոհված ընկերների և առաջին հերթին Գագիկ Մանուկյանի (Զոլ) վրեժն առնի թշնամուց: Զոլը նրա համար լոկ ընկեր չէր, ինչ որ տեղ նրան էր պարտական զինվորականի ճակատագրի, կյանքի նման շարունակության ընտրելու համար:

– Սևանի երկրապահի ջոկատում ընդգրկվեցի ոչ նրա համար, որ զարմացնեի իմ ռազմական ունակություններով, – պատմում է Գագիկը: – Պարզապես առաջնորդվեցի Մոնթե Մելքոնյանի արդեն թևավոր դարձած այն խոսքերով, թե «Այսօր ամեն մեկի համար առաջահերթությունն պետք է լինի ծառայել իր ժողովրդին»: Ես կարծում եմ, այս տրամաբանությամբ են շարժվել և շարժվում մեր մեռած ու ողջ մնացած մարտական ընկերները՝ Սոկրատ Սարգսյանը, Յուրի Հովհաննիսյանը, Սամվել Գևորգյանը, Վարդան Աղիխանյանը..

... Մաշտոցի շրջանի ԴՕՍԱԱՖ-ի շենքի երկրորդ հարկի ոչ այնքան ընդարձակ սենյակներից մեկն անսովոր աղմուկով է լցված: Ել ու մուտ են անում զինվորական ու քաղաքացիական հագուստով մարդիկ, բոլորի դեմքին լրջություն, մտահոգություն, սպասում, ինչու չէ, նաև թախիծ կա:

Իսկ պատերին մեր ոչ հեռավոր ու «լուսավոր» անցյալի կարգախոսներ են. «Սովորել, սովորել, սովորել», «Ուսուցիչն աշխատում է ամենապատասխանատու նյութի վրա. նա ձևավորում է մարդուն»:

Սրանց կողքին՝ Հայաստանի, Ղարաբաղի բազմապիսի քարտեզներ և մի երկու գրասեղան ու աթոռ: Ընդամենը մեկ ամիս չկա, որ զոհվել է 83-րդ մոտո-հրաձգային առանձին բրիգադի հրամանատար Յուրի Հովհաննիսյանը և, հասկանալի է նրա կիսատ թողած գործն ստանձնած երիտասարդ կապիտանի մտահոգությունը, չէ որ վերջապես հնարավորություն է ընձեռվել համախմբել հանրապետության սահմանամերձ բոլոր շրջանների երկրապահ ջոկատների առանձին կուսակցությունների հայրենիքի պաշտպանությանը զինվորագրված նվիրյալների աշխատանքը: Ստեղծվում է պայմանագրային բանակ՝ պետական մակարդակով, բանակ, որը պաշտպանելու, հսկելու է մեր հայրենիքի սահմանները, անհրաժեշտության դեպքում վերացնելու թշնամու կրակակետերը, մարտական դիրքերը:

6 ամսից մինչև 5 տարի ժամանակով պայմանագրային բանակում ծառայող մարտիկը օգտվում է Հայաստանի կառավարության և ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նախատեսված արտոնություններից, միաժամանակ բարձրանում է նրա պատասխանատվությունը իր կատարած յուրաքանչյուր քայլի համար:

– Ես ինձ համարում եմ երկրապահի ջոկատների բովով անցած, թեպետ զինվորական պրոֆեսիոնալ կրթություն եմ ստացել, ծառայել տարբեր զորամասերում, – շարունակում է Գագիկը, – և ես հրաշալի եմ գիտակցում, թե որքան է կարևորվում իմ աշխատանքը հատկապես այս փուլում:

Դժվար չէ կռահել, որ նրա ժամանակը հաշվարկված է, այնուամենայնիվ, մտքեր ենք փոխանակում: Երիտասարդ կապիտանը շտապում է ժամ առաջ լինել այնտեղ, ուր մարտական ընկերներն են, ուր հայրենիքի սահմանն է, թեպետ, չի թաքցնում, ուզում է, որ պատերազմը շուտ վերջանա՝ ծնողներն արդեն երրորդ տարին է սպասում են ամուսնանալուն ու ինքը խոստացել է, որ այս աշնանը, եթե ամեն ինչ բարեհաջող ավարտվի, ամուսնանալու է, մի լավ քեֆ են անելու:

Աստված օգնական..

**Սանդրո Զուլհակյան**